Պարոն Թէլեան քննութիւնը կատարել և վերադարձել է Նրուսաղէմից։

ՊԱՐՍԿԱՀԱՅՔ

Նոյեմբեր ամսի 5-ին Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց առաջնորդը, տէր Սահակ արքեպիսկոպոսը, ճանապարհ է ընկել դէպի Հնդկաստան այցելելու իւր հօտին։ Նախապէս յայտնած լինելով ազգիս Վեհափառ Հայրապետին իւր դիտաւորութեան մասին, խնդրել և ստացել է շրջաբերական օրհնութեան կոնդակ ուղղուած այնտեղի տարագիր ժողովրդի։ Այսպիսի մի ճանապարհորդութիւն կապուած է մեծամեծ դժուարութիւնների հետ, ցամաքային ճանապարհով Պարսկաստանից մինչև Հնդկաստան, կամ ծովային ճանապարհով Սուէզեան ջրանցքի վրայով, որոնցից թէ մէկը և թէ միւսը, թէ շատ մեծածախս է և թէ ժամանակ շատ է պահանջում։ Հնդկաստան վերջին անգամ այցելել է հանգուցեալ տէր Նոյի արքեպիսկոպոսը, որի հետ պատահած մի քանի անախորժութիւններ տեղական հայերի կողմից թելադրել են տէր Սահակ արքեպիսկոպոսին շրջահայեաց լինել և իւր այցելութեանը աւելի պաշտօնական կերպարանք տալ։ Այդ դիտաւորութեամբ նա Թեհրանի անգլիական դեսպանի միջոցով դիմել է Հնդկաստանի փոխարքային և յայտնել իւր դիտաւորութիւնը։ Այժմ նա Հնդկաստան է գնում նախապէս որոշուած ծրագրով, ամբողջ ճանապարհին նրան ցոյց կը տրուի պաշտօնական ընդունելութիւն, մի հանդամանք, որ կարևորութիւն տալով նրա դիրքին, կը նպաստի կարգաւորելու մի շարք ազգային եկեղեցական խնդիրներ, որ տարիներից ի վեր մնացել էին առկախ։ Բարի երթ արքեպիսկոպոսի հօրը և յաջողութիւն իւր օգտակար ձեռնարկութիւններին։